

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 5-Ա
«18» սեպտեմբերի 2023թ.

ԹԻՎ 7 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի 2023 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 3-Ա, թիվ 4-Ա և թիվ 5-Ա որոշումները՝ հանձնաժողովների անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարումն արձանագրելու մասին և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Թիվ 7 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի օգոստոսի «24»-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերը հաստատելու և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին» N 2-Ա որոշման 1-ին կետի՝

- 1) 21-րդ ենթակետից հանել «Աղիարյան Լուիզա Սարգսի» բառերը.
- 2) 45-րդ ենթակետից հանել «Աջամողյան Արեվիկ Արամի» բառերը.
- 3) 57-րդ ենթակետից հանել «Պետրոսյան Մարթա Գարիի» բառերը:

Թիվ 7 ընտրատարածքային ընտրական
հանձնաժողովի նախագահ

Ա. Սաֆարյան

Կ.Տ